ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշում — Քաղաքացիական գործ թիվ **ՇԴ/0315/02/24**
2026թ.

Քաղաքացիական գործ թիվ ՇԴ/0315/02/24
Նախագահող դատավոր՝ Լ. Գրիգորյան
Դատավորներ՝ Ժ. Ասատրյան
Ն. Գաբրիելյան

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
զեկուցող Ս. ՄԵՂՐՅԱՆ
Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ
Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ
Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ

2026 թվականի նոյեմբերի 25-ին

գրավոր ընթացակարգով քննելով ըստ «Լենտեքս» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ «Տոսպ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջի մասին, և ըստ Կազմակերպության հակընդդեմ հայցի ընդդեմ Ընկերության՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.10.2025 թվականի որոշման դեմ Կազմակերպության բերած վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը

Դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար: Կազմվել է թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Ընկերությունը պահանջել է

Կազմակերպությանը պարտավորեցնել ընդունել վերադարձվող ապրանքները և կազմել փոխադարձ հաշվարկի ակտ:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 16.05.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով Կազմակերպության սկզբնական հայցը թողնվել է առանց քննության, թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործից առանձին վարույթում առանձնացվել է Ընկերության հակընդդեմ հայցով պահանջների մասը, որով քաղաքացիական գործին շնորհվել է նոր՝ թիվ ՇԴ/0315/02/24 համարը:

Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար:

Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 28.11.2024 թվականի վճռով սկզբնական հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 07.10.2025 թվականի որոշմամբ Ընկերության վերաքննիչ բողոքը բավարարվել է մասնակիորեն՝ Դատարանի 28.11.2024 թվականի վճիռը բեկանվել է, և քաղաքացիական գործի վարույթը կարճվել է:

Վճռաբեկ բողոք է ներկայացրել Կազմակերպությունը (ներկայացուցիչ Գևորգ Հարությունյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածները, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 140-րդ հոդվածն ու 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Բողոք բերած անձը նշված հիմքերի առկայությունը պատճառաբանել է հետևյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործից հակընդդեմ հայցով պահանջների մասն առանձին վարույթում առանձնացվելուց և առանձնացված մասով քաղաքացիական գործին նոր համար շնորհելուց հետո վերջինիս քննությունը պետք է իրականացվեր սկզբնական հայցի համար սահմանված իրավակարգավորումների շրջանակներում, քանի որ նշվածի արդյունքում հակընդդեմ հայցն ստացել է սկզբնական հայցի կարգավիճակ:

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ Դատարանը, առանձնացնելով գործի վարույթը, ըստ էության, սկսել է նոր գործի վարույթ՝ հիմքում ունենալով հայց, որն

առանձնացման պահից դարձել է սկզբնական, ուստի չկար որևէ օրենսդրական արգելք մինչև այդ գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնելու համար: Համապատասխանաբար չկար նաև գործի վարույթը կարճելու հիմք՝ առավել ևս այն հիմքով, որ սույն դեպքում հակընդդեմ հայցը ենթակա չէր քննության քաղաքացիական դատավարության կարգով:

Վերոգրյալի հիման վրա բողոք բերած անձը պահանջել է «բավարարել վճռաբեկ բողոքը՝ մասնակիորեն՝ «Տոսպ Գրուպ» ՍՊ ընկերության մասով, բեկանելով վերաքննիչ քաղաքացիական դատարանի թիվ ՇԴ/0315/02/24 քաղաքացիական գործով 07.10.2025թ-ին կայացված որոշումը, գործն ուղարկել առաջին ատյանի դատարան նոր քննության կամ մասնակիորեն օրինական ուժ տալ առաջին ատյանի դատարանի դատական ակտին»:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1) դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար **(հատոր 1-ին, գ.թ. 4-10)**.

2) Դատարանի 08.01.2024 թվականի որոշմամբ Կազմակերպության հայցադիմումն ընդունվել է վարույթ, և կազմվել է թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործը **(հատոր 1-ին, գ.թ. 1, 2)**.

3) Ընկերությունը 25.03.2024 թվականին հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Կազմակերպության՝ ապրանքներն ընդունելուն և փոխադարձ հաշվարկի ակտ կազմելուն պարտավորեցնելու պահանջների մասին **(հատոր 2-րդ, գ.թ. 128-137)**.

4) Դատարանի 02.04.2024 թվականի որոշմամբ Ընկերության հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ **(հատոր 2-րդ, գ.թ. 164)**.

5) Դատարանի 16.05.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով Կազմակերպության սկզբնական հայցը թողնվել է առանց քննության՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետն ու այն հանգամանքը, որ Կազմակերպության ներկայացուցիչը, ծանուցված լինելով 18.03.2024 և 16.05.2024 թվականներին նշանակված երկու հաջորդական դատական նիստերի ժամանակի ու վայրի վերաբերյալ, չի ներկայացել դատական նիստերին և չի ներկայացրել միջնորդություն գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ քննելու մասին: Նույն որոշմամբ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործից առանձին վարույթում առանձնացվել է Ընկերության հակընդդեմ հայցով պահանջների մասը և որոշվել է քաղաքացիական գործին շնորհել նոր համար (թիվ ՇԴ/0315/02/24) ու նշանակել նախնական դատական նիստ՝ 13.06.2024 թվականին **(հատոր 2-րդ, գ.թ. 188-190)**.

6) Կազմակերպությունը 19.06.2024 թվականին հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Ընկերության՝ 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես

մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար բռնագանձելու պահանջի մասին **(հատոր 3-րդ, գ.թ. 8-15)**.

7) Դատարանի 25.06.2024 թվականի որոշմամբ Ընկերության հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ **(հատոր 3-րդ, գ.թ. 73)**.

8) Դատարանը 19.08.2024 թվականին կայացրել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում **(հատոր 4-րդ, գ.թ. 6-8)**:

4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ՝ նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ բողոքարկվող դատական ակտը կայացնելիս Վերաքննիչ դատարանը թույլ է տվել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի ու 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի այնպիսի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը:

Սույն վճռաբեկ բողոքի քննության շրջանակներում Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցին՝ արդյո՞ք սկզբնական կամ հակընդդեմ հայցի մասով գործի վարույթն առանձնացնելու և այդ մասով հայցն առանց քննության թողնելու դեպքերում շահագրգիռ անձը զրկվում է առանց քննության թողնված հայցը կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունից՝ ներառյալ հակընդդեմ հայց ներկայացնելու կարգով:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 80-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ նույն գլխում [Սահմանադրության 2-րդ գլուխ] ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) կողմից դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ ձևավորված կայուն նախադեպային իրավունքի համաձայն՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է բոլոր անձանց քաղաքացիական իրավունքներին և

պարտականություններին վերաբերող յուրաքանչյուր պահանջ դատարանին ներկայացնելու իրավունքը: Այդ դրույթը մարմնավորում է «դատարանի իրավունքը», որը հնարավորություն է տալիս օգտվելու Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետում նախատեսված մյուս երաշխիքներից և որի սահմանափակումը դատարանների կողմից ընթացակարգային օրենքների զուտ խիստ մեկնաբանման հետևանքով կառաջացնի իրավունքի խախտում, ու անձի այդ իրավունքը կկրի վերացական բնույթ, հետևաբար քաղաքացիական գործերով արդարադատություն իրականացնելիս, դժվար է պատկերացնել իրավունքի գերակայություն, եթե դատարան դիմելու իրավունքը չի ապահովվում, ինչի արդյունքում առհասարակ արժեզրկվում են այդ վարույթի արդար, հրապարակային և արագ քննության բնորոշումները: Ընդ որում, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի նպատակը ոչ թե տեսական կամ վերացական, այլ գործնական և արդյունավետ իրավունքների երաշխավորումն է: Դա, մասնավորապես, վերաբերում է դատարան դիմելու իրավունքին՝ նկատի ունենալով այն զգալի դերը, որ արդար դատաքննության իրավունքն իրականացվում է ժողովրդավարական հասարակությունում *(տե՛ս Կրեուզն ընդդեմ Լեհաստանի թիվ 28249/95 գանգատով Եվրոպական դատարանի 19.06.2001 թվականի վճիռը, կետ 52--56, Գոլդերն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 4451/70 գանգատով Եվրոպական դատարանի 21.02.1975 թվականի վճիռը, կետ 34-36)*:

Եվրոպական դատարանի տեսանկյունից՝ դատարանի իրավունքը, որի մի մասն էլ կազմում են «դատարան դիմելու» և «դատարանի մատչելիության» իրավունքները, բացարձակ չէ ու կարող է ենթարկվել սահմանափակումների: Այդ սահմանափակումները թույլատրվում են, քանի որ մատչելիության իրավունքն իր բնույթով պահանջում է պետության կողմից որոշակի կարգավորումներ, և այս առումով պետությունը որոշակի հայեցողական լիազորություն ունի: Սակայն դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է իրականացվի այնպես, որ չխախտի կամ զրկի անձին մատչելիության իրավունքից այնպես կամ այն աստիճան, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը *(տե՛ս Աշինգդեյնն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 8225/78 գանգատով Եվրոպական դատարանի 28.05.1985 թվականի վճիռը, կետ 57, Տոլստոյ Միլոսլավսկին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 18139/91 գանգատով Եվրոպական դատարանի 13.07.1995 թվականի վճիռը, կետ 59)*: Բացի այդ, սահմանափակումը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին չի համապատասխանի, եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն՝ գործնական ու արդյունավետ իրավունքների երաշխավորման ապահովմամբ *(տե՛ս Ալ-Ադսանին ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 35763/97 գանգատով Եվրոպական դատարանի 21.11.2001 թվականի վճիռը, կետ 53, Խալֆաուին ընդդեմ Ֆրանսիայի թիվ 34791/97 գանգատով Եվրոպական դատարանի 14.12.1999 թվականի վճիռը, կետ 35, 36, Պապոն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 54210/00 գանգատով Եվրոպական դատարանի 25.07.2002 թվականի վճիռը, կետ 90, «Պայքար և հաղթանակ» ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի թիվ 21638/03 գանգատով Եվրոպական դատարանի 20.12.2007 թվականի վճիռը, կետ 44)*:

Եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում նշել է, որ պետությանը տրվում է դատարան դիմելու իրավունքն ապահովող միջոցների ազատ ընտրություն. դրանք

կարող են անորոշ սահմանափակումների ենթարկվել՝ պայմանով, որ չեն վնասի իրավունքի բուն էությունը *(տե՛ս Սելիսն ընդդեմ Ֆրանսիայի թիվ 14166/09 գանգատով Եվրոպական դատարանի 08.03.2012 թվականի վճիռը, կետ 33)*, միտված կլինեն իրավաչափ նպատակի և կլինեն համաչափ *(տե՛ս Մելիկն ընդդեմ Ուկրաինայի թիվ 23436/03 գանգատով Եվրոպական դատարանի 28.03.2006 թվականի վճիռը, կետ 22)*:

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանը նշել է, որ դատարանի մատչելիությունն օրենսդրական կարգավորումների առարկա է, և դատարանները պարտավոր են կիրառել դատավարական համապատասխան կանոնները՝ խուսափելով ինչպես գործի արդարացի քննությանը խոչընդոտող ավելորդ ձևականություններից (ֆորմալիզմից), այնպես էլ չափազանց ճկուն մոտեցումից, որի դեպքում օրենքով սահմանված դատավարական պահանջները կկորցնեն իրենց նշանակությունը: Ըստ Եվրոպական դատարանի՝ դատարանի մատչելիության իրավունքը խաթարվում է այն դեպքում, երբ օրենսդրական նորմերը դադարում են ծառայել իրավական որոշակիության ու արդարադատության պատշաճ իրականացման նպատակներին և խոչընդոտում են անձին հասնել իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը *(տե՛ս Դումիտրու Գեորգն ընդդեմ Ռումինիայի թիվ 33883/06 գանգատով Եվրոպական դատարանի 12.04.2016 թվականի վճիռը, կետ 28)*:

Անդրադառնալով անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացման իրավական խնդրին՝ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է իր իրավունքների տարաբնույթ խախտումներից, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից: (...):

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառ գործունեություն իրականացնելիս» *(տե՛ս Սահմանադրական դատարանի 28.11.2007 թվականի թիվ ՍԴՈ-719 որոշումը)*:

Սահմանադրական դատարանը, մի շարք որոշումներով (10.12.2013 թվականի թիվ ՍԴՈ-1127, 10.02.2015 թվականի թիվ ՍԴՈ-1190, 03.03.2015 թվականի թիվ ՍԴՈ-1192, 16.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1220, 26.06.2015 թվականի թիվ ՍԴՈ-1222, 10.03.2016 թվականի թիվ ՍԴՈ-1257 և այլն) անդրադառնալով արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատաքննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ՝

- դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստազրկել Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ,

- ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարան դիմելիս անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինքնին չի կարող դիտվել որպես Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և չհանգեցնի իրավունքի էության խախտման:

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատարան դիմելու իրավունքը վերապահված է այն անձին, ում իրավունքները խախտվել են, կամ առկա է նման վտանգ: Դիմելով դատարան՝ անձն ակնկալում է ենթադրյալ խախտված իրավունքի պաշտպանություն, հարցի վերջնական լուծում: Այսինքն՝ դատարան դիմած անձն ունի իրավական ակնկալիք՝ կապված իր իրավունքների ենթադրյալ խախտման վերացման հետ, առ այն, որ այդ խախտումը կվերացվի ողջամիտ ժամկետում, անձը կստանա ակնկալվող դատական ակտը: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավոր սահմանափակումները չպետք է կրեն ձևական բնույթ, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա: Հակառակ դեպքում կխախտվեն անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքները *(տե՛ս Վիկտորյա Ռահյանն ընդդեմ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի թիվ ԵԴ/22031/02/21 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 07.05.2024 թվականի որոշումը)*:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի նույն օրենսգրքով սահմանված կարգով դիմելու դատարան՝ Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 12-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցում է միայն հայցադիմումի կամ դիմումի հիման վրա:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցը հարուցվում է նույն օրենսգրքով սահմանված կարգով հայցադիմում ներկայացնելու միջոցով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը վարույթ է ընդունում ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու

հիմքերը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ դատարանը դատավարության ցանկացած փուլում հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության, եթե ծանուցված հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը չի ներկայացել երկու հաջորդական դատական նիստերին և չի ներկայացրել գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ լուծելու վերաբերյալ միջնորդություն, և պատասխանողը չի միջնորդել գործի քննությունը շարունակելու վերաբերյալ, բացառությամբ այն գործերի, որոնցում սկզբնական հայցի հետ համատեղ քննվում է նաև հակընդդեմ հայց:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցն իրավունքի դատական պաշտպանության նպատակով դատարան դիմող անձի դատական պաշտպանության դատավարական միջոցն է: Օրենքի պահանջների պահպանմամբ հայցադիմում ներկայացնելը դատարանի մոտ առաջացնում է այն վարույթ ընդունելու, սահմանված դատավարական ընթացակարգերի պահպանմամբ քննելու և նյութական օրենսդրության կիրառելի նորմերին համապատասխան գործն ըստ էության լուծող դատական ակտ՝ վճիռ կայացնելու պոզիտիվ պարտականություն:

Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործերով վարույթները, որպես կանոն, ավարտվում են վճիռների կայացմամբ, որոնցով կողմերի միջև առկա նյութահիրավական վեճը (գործը) լուծվում է ըստ էության: Սակայն օրենքով նախատեսված առանձին դեպքերում առաջին ատյանի դատարանում վարույթը կարող է ավարտվել նաև առանց վեճը (գործը) ըստ էության լուծելու: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նախատեսում է առանց գործն ըստ էության լուծելու վարույթն ավարտելու երկու ձևեր՝ գործի վարույթը կարճելը և հայցը (դիմումը) առանց քննության թողնելը: Գործի վարույթն ավարտելու նշված ձևերն իրարից տարբերվում են ինչպես կիրառման հիմքերով, այնպես էլ հետևանքներով: Այսպես, եթե գործի վարույթը կարճելը, որպես կանոն, պայմանավորված է հայցվորի՝ տվյալ գործով դատական պաշտպանության դիմելու իրավունքի բացակայությամբ, և, հետևաբար, բացառում է հետագայում նույն հայցով կրկին դատարան դիմելու հնարավորությունը (բացառությամբ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածով սահմանված դեպքերի), ապա հայցն առանց քննության թողնելը նման հետևանքներ չի առաջացնում, քանի որ պայմանավորված է ոչ թե դատական պաշտպանության դիմելու իրավունքի բացակայությամբ, այլ սահմանադրորեն երաշխավորված այդ իրավունքի իրացման համար օրենքով նախատեսված պահանջների չպահպանմամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, **բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման**:

Նշված նորմի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ թեև հայցը (դիմումը)

առանց քննության թողնելու մասին որոշումը հանդիսանում է եզրափակիչ դատական ակտ, որի կայացմամբ առաջին ատյանի դատարանում տվյալ գործով ավարտվում է վարույթը, այդուհանդերձ այն չի բացառում շահագրգիռ անձի կողմից նույն հայցը (դիմումը) կրկին դատարան ներկայացնելու իրավական հնարավորությունը, հետևաբար չի կարող խոչընդոտել անձին հասնելու իրավասու դատարանի կողմից իր գործի ըստ էության քննությանը: Վճռաբեկ դատարանի գնահատմամբ նշվածը լիովին վերաբերում է նաև այն դեպքերին, երբ հայցը թողնվում է առանց քննության ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով:

Նախկինում կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի հիման վրա հայցը (դիմումը) առանց քննության թողնելն իրենից ներկայացնում է դատական նիստերին չներկայանալու համար վարույթը նախաձեռնողի, այսինքն՝ հայցվորի (դիմողի), նկատմամբ կիրառվող պատասխանատվության առանձնահատուկ միջոց: Տրամաբանությունն այն է, որ եթե հայցվորը (դիմողը) կամ նրա ներկայացուցիչը, պատշաճ ծանուցված լինելով դատական նիստերի վայրի և ժամանակի մասին, երկու անգամ անընդմեջ չեն ներկայանում դատական նիստերին և դատարանին չեն հայտնում դրանց չներկայանալու պատճառների մասին կամ չեն ներկայացնում գործն իրենց բացակայությամբ լուծելու հնարավորության վերաբերյալ դիրքորոշում, ապա անուղղակի կերպով հայտնում են գործի նկատմամբ հետևողականություն չցուցաբերելու, դրա նկատմամբ հետաքրքրվածությունը կորցրած լինելու և «վիճելու» կամքի բացակայության մասին: Եթե քաղաքացիական գործի հարուցում նախաձեռնած անձը երկու անգամ անընդմեջ անձամբ կամ ներկայացուցչի միջոցով չի մասնակցում դատական նիստերին ու դրանց ընթացքում տեղի ունեցող դատավարական գործողություններին և դատարանին չի ներկայացնում վեճն իր բացակայությամբ լուծելու կամ գործի քննությունը հետաձգելու մասին միջնորդություն, ապա այդ պասիվ վարքագիծը վկայում է այն մասին, որ դատարան դիմած անձն արդեն կորցրել է իր պահանջի նկատմամբ նախկինում ունեցած հետաքրքրությունը, որպիսի պայմաններում պահանջի հետագա քննությունը դարձել է իմաստազուրկ: Եթե չկա պահանջի քննությամբ հետաքրքրված հայցվոր (դիմող), ապա չկա նաև այն քննող դատարան *(տե՛ս Լևոն Բարսեղյանն ընդդեմ Արտյոմ Խաչատրյանի թիվ ԵԴ/23801/02/18 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 15.04.2022 թվականի որոշումը)*:

Վերահաստատելով արտահայտված դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ քննարկվող դեպքում հայցն առանց քննության թողնելու հիմքում ընկած է հայցվորի՝ իր կողմից ներկայացված հայցի նկատմամբ հետաքրքրվածությունը կորցրած լինելու և «վիճելու» կամքի բացակայության կանխավարկածը (թույլատրելի ենթադրությունը), որը, սակայն, կարող է հերքվել իրավունքի դատական պաշտպանության դիմած անձի հետագա վարքագծով: Հետևաբար, եթե հայցը (դիմումը) առանց քննության թողնելուց հետո նույն հայցադիմումը կրկին ներկայացվում է դատարան, այն առանց որևէ բացառության ենթակա է քննության: Նշվածով էլ պայմանավորված է այն իրողությունը, որ օրենսդիրը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին

մասում սահմանելով հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, նույն մասի 1-ին կետում բացառություն է սահմանել այն դեպքերի համար, երբ նույն անձանց միջև նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշում:

Իրավունքների պաշտպանության հայցային ձևը, հիմնված լինելով արդար դատաքննության իրավունքի՝ հավասարության պայմաններում գործի քննության սկզբունքի լիարժեք իրացման վրա, ներառում է Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ ամրագրված մրցակցային դատավարության ապահովման բոլոր գործառութային տարրերն ու հիմնադրույթները:

Եվրոպական դատարանը նախկինում կայացված որոշմամբ արձանագրել է, որ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որ յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ***ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ապացույցներ ներկայացնելու, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում*** *(տե՛ս Անկերլն ընդդեմ Շվեյցարիայի թիվ 17748/91 գանգատով Եվրոպական դատարանի 23.10.1996 թվականի վճիռը, կետ 38)*:

Նշվածից հետևում է, որ եթե օրենքով հայցվորին ընձեռվել է պատասխանողի դեմ որոշակի փաստական և իրավական հիմնավորումներով հայցային պահանջներ ներկայացնելու հնարավորություն, ապա պատասխանողի համար ևս սեփական շահերը պաշտպանելու ու դիրքորոշում ներկայացնելու հավասար դատավարական պայմաններ պետք է ապահովվեն:

Օրենսդիրը նշված նկատառումներով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ գլխում նախատեսել է նաև պատասխանողի շահերի պաշտպանության միջոցները, որոնցից է հակընդդեմ հայցը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատասխանողն իրավունք ունի մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնել ընդդեմ հայցվորի՝ սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ հայցը ներկայացվում է, վարույթ է ընդունվում, ընդունումը մերժվում կամ վերադարձվում է հայցադիմումին վերաբերող նույն օրենսգրքով նախատեսված կարգով:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հակընդդեմ հայցն առաջին ատյանի դատարանն ընդունում է վարույթ, եթե՝

1) հակընդդեմ պահանջն ուղղված է սկզբնական պահանջի հաշվանցմանը.

2) հակընդդեմ հայցի բավարարումն ամբողջությամբ կամ մասնակիորեն բացառում է սկզբնական հայցի բավարարումը.

3) հակընդդեմ և սկզբնական հայցերի միջև առկա է փոխադարձ կապ, ու դրանց

համատեղ քննությունը կարող է ապահովել գործի առավել արագ և արդյունավետ լուծումը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե հայցը դատարան դիմող սուբյեկտի իրավունքների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության դատավարական միջոց է, ապա հակընդդեմ հայց ներկայացնելու պատասխանողի դատավարական իրավունքն ունի երկակի բնույթ. մի կողմից՝ այն հայցի դեմ պաշտպանության միջոց է, որը կոչված է երաշխավորելու հարուցված վարույթի շրջանակներում իր դեմ ներկայացված պահանջների դեմ պաշտպանվելու պատասխանողի իրավական հնարավորությունը, մյուս կողմից՝ այն հանդես է գալիս որպես հայցվորին ուղղված պատասխանողի նյութահիրավական պահանջները ներկայացնելու, այդ պահանջներով դատական պաշտպանություն հայցելու, հետևաբար նաև Սահմանադրությամբ և Կոնվենցիայով երաշխավորված՝ իր «դատարանի իրավունքը» իրացնելու միջոց:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայից ուղղակիորեն բխում է, որ հակընդդեմ հայցը պատասխանողի այն նյութահիրավական պահանջն է, որը ներկայացվում է դատարան սկզբնական հայցի հետ համատեղ քննելու համար: Նշվածի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քաղաքացիական գործով վարույթի շրջանակներում հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունք ունի բացառապես գործով սկզբնական պատասխանողի կարգավիճակ ունեցող անձը, այսինքն՝ այն սուբյեկտը, որի դեմ հայց է ներկայացվել առաջին ատյանի դատարան կամ որը նման կարգավիճակ է ստացել սահմանված կարգով ոչ պատշաճ պատասխանողին պատշաճ պատասխանողով փոխարինելու կամ որպես նոր պատասխանող ներգրավվելու արդյունքում: Նշվածից հետևում է, որ օրենսդիրը ոչ միայն բացառել է գործին մասնակցող այլ անձանց կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու հնարավորությունը, այլ նաև նման իրավունք չի վերապահել հակընդդեմ հայցով պատասխանողին՝ սկզբնական հայցվորին:

Միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանը հարկ է համարում արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը կամ դիմումն առանձին պահանջի մասով առանց քննության թողնելու հիմքերի առկայության դեպքում առաջին ատյանի դատարանն այդ մասով առանձնացնում է գործի վարույթը և առանձնացված մասով հայցը կամ դիմումը թողնում է առանց քննության:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ դատարանի որոշմամբ առանձին պահանջի մասով վարույթ առանձնացվելու դեպքում նախկինում տարբեր (հաճախ միմյանց բացառող) հայցերով ծանրաբեռնված վարույթն էապես պարզեցվում է առնվազն այնքանով, որ դատարանի քննության առարկա են դառնում միայն առանձնացված պահանջները, իսկ առանց քննության թողնված (այդ թվում՝ սկզբնական կամ հակընդդեմ) պահանջները քննելու և լուծելու դատարանի պոզիտիվ պարտականությունը դադարում է: Համապատասխանաբար սկզբնական կամ հակընդդեմ հայցն ամբողջությամբ առանց քննության թողնվելու դեպքում դադարում է գործին մասնակցող անձանց «սկզբնական հայցվոր և հակընդդեմ հայցով պատասխանող» ու «սկզբնական պատասխանող և հակընդդեմ հայցով հայցվոր» դատավարական կարգավիճակը՝ սկզբնական կամ հակընդդեմ հայցի բացակայության պայմաններում գործնականում այլևս

«փոխակերպվելով» գործով հայցադիմում ներկայացրած անձի՝ հայցվորի և այդ հայցով պատասխանողի կարգավիճակի: Ընդ որում, նման «փոխակերպված» կարգավիճակ ձեռք բերած գործին մասնակցող անձանց համար օրենքը ևս երաշխավորում է օրենքով սահմանված կարգով իրենց դատավարական իրավունքներն իրենց հայեցողությամբ իրականացնելու, այդ թվում՝ իրենց շահերի պաշտպանության դատավարական միջոցներից օգտվելու հնարավորությունը՝ անկախ նախկինում քաղաքացիական գործի շրջանակներում ունեցած դատավարական կարգավիճակից:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում փաստել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառմամբ սկզբնական կամ հակընդդեմ հայցի մասով գործի վարույթն առանձնացվելու և այդ մասով հայցն առանց քննության թողնվելու դեպքում ևս համապատասխան շահագրգիռ անձը չի զրկվում առանց քննության թողնված հայցը կրկին դատարան ներկայացնելու հնարավորությունից: Ընդ որում, կրկին դատարան դիմելու իր իրավունքը շահագրգիռ անձը տվյալ դեպքում ևս կարող է իրացնել ինչպես ընդհանուր հիմունքներով հայցադիմում ներկայացնելու, այնպես էլ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների պահպանմամբ հակընդդեմ հայց ներկայացնելու եղանակով:

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ

Սույն գործի փաստերի համաձայն՝ դիմելով դատարան՝ Կազմակերպությունը պահանջել է Ընկերությունից բռնագանձել 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար: Դատարանի 08.01.2024 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ, և կազմվել է թիվ ԵԴ/9165/02/23 քաղաքացիական գործը:

Ընկերությունը 25.03.2024 թվականին հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Կազմակերպության՝ ապրանքներն ընդունելուն և փոխադարձ հաշվարկի ակտ կազմելուն պարտավորեցնելու պահանջների մասին: Դատարանի 02.04.2024 թվականի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 16.05.2024 թվականի որոշմամբ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով Կազմակերպության սկզբնական հայցը թողնվել է առանց քննության՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետն ու այն հանգամանքը, որ Կազմակերպության ներկայացուցիչը, ծանուցված լինելով 18.03.2024 և 16.05.2024 թվականներին նշանակված երկու հաջորդական դատական նիստերի ժամանակի ու վայրի վերաբերյալ, չի ներկայացել դատական նիստերին և չի ներկայացրել միջնորդություն գործի քննությունը հետաձգելու կամ գործն իր բացակայությամբ քննելու մասին: Նույն որոշմամբ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործից առանձին վարույթում առանձնացվել է Ընկերության հակընդդեմ հայցով պահանջների մասը և որոշվել է քաղաքացիական գործին շնորհվել նոր համար (թիվ ՇԴ/0315/02/24) ու նշանակել նախնական դատական նիստ՝ 13.06.2024 թվականին:

Կազմակերպությունը 19.06.2024 թվականին հակընդդեմ հայցադիմում է ներկայացրել

Դատարան ընդդեմ Ընկերության՝ 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար բռնագանձելու պահանջի մասին: Դատարանի 25.06.2024 թվականի որոշմամբ հակընդդեմ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանը 19.08.2024 թվականին կայացրել է ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում:

Դատարանի 28.11.2024 թվականի վճռով սկզբնական հայցը մերժվել է, իսկ հակընդդեմ հայցը՝ բավարարվել:

Վերաքննիչ դատարանը, 07.10.2025 թվականի որոշմամբ արձանագրելով, որ

- «(...) թիվ ՇԴ/0315/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում «Տոսպ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից գումարի բռնագանձման պահանջի մասին հակընդդեմ հայցը ներկայացվել է ընդդեմ հակընդդեմ հայցով հանդես եկած «Լենտեքս» ՍՊ ընկերության, ինչը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի ուղղակի խախտում է, ուստի «Տոսպ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հակընդդեմ հայցը ենթակա էր վերադարձման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հիման վրա՝ առանց թերությունները վերացնելու և այն Դատարան կրկին ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու՝ համաձայն նույն հոդվածի 4-րդ մասի»,

- «(...) «Տոսպ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հակընդդեմ հայցի մասով նույնպես առկա է եղել քաղաքացիական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը», եզրահանգել է, որ *«սույն քաղաքացիական գործի վարույթը (...) «Տոսպ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված պահանջների մասով ենթակա էր կարճման՝ համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջների, որպիսի հիմնավորմամբ* (...) *անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից՝ սույն դեպքում առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված դատական ակտի անվերապահ բեկանման հիմքը»*:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դիրքորոշումները և սույն գործի փաստական հանգամանքները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Կազմակերպության կողմից ներկայացված պահանջի մասով գործի վարույթը կարճելու հիմքի առկայության վերաբերյալ Վերաքննիչ դատարանի եզրահանգումներն անհիմն են՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Վճռաբեկ դատարանի գնահատմամբ Վերաքննիչ դատարանն անտեսել է, որ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով Կազմակերպության սկզբնական՝ 37.035.853,64 ՀՀ դրամ՝ որպես մատակարարված ապրանքի համար չվճարված պարտքի գումար, բռնագանձելու պահանջի մասին հայցը Դատարանի 16.05.2024 թվականի որոշմամբ առանց քննության թողնվելու պայմաններում Կազմակերպությունը չի զրկվել նույն հայցը կրկին դատարան ներկայացնելու իրավունքից, որը կարող էր իրականացվել ոչ միայն ընդհանուր հիմունքներով հայցադիմում, այլ նաև հակընդդեմ հայց ներկայացնելու միջոցով:

Արձանագրելով, որ Կազմակերպությունը գումարի բռնագանձման պահանջի մասին

հակընդդեմ հայցը ներկայացրել է ընդդեմ հակընդդեմ հայցով հանդես եկած Ընկերության, ինչը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասի պահանջի խախտում է այն իմաստով, որ դատավարական օրենսդրությունը չի նախատեսում հակընդդեմ հայցով պատասխանողի կողմից հակընդդեմ հայց ներկայացնելու իրավունք՝ Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել, որ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով Դատարանի 16.05.2024 թվականի որոշմամբ սկզբնական հայցն առանց քննության թողնվելու և հակընդդեմ հայցի մասով վարույթն առանձնացվելու արդյունքում վարույթը թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով ավարտվել է, համապատասխանաբար դադարել են Կազմակերպության՝ «սկզբնական հայցվոր և հակընդդեմ հայցով պատասխանող» ու Ընկերության՝ «սկզբնական պատասխանող և հակընդդեմ հայցով հայցվոր» դատավարական կարգավիճակները՝ սույն քաղաքացիական գործի շրջանակներում սկզբնական հայցի բացակայության պայմաններում այլևս «փոխակերպվելով» գործով հայցադիմում ներկայացրած անձի՝ հայցվորի և այդ հայցով պատասխանողի կարգավիճակի, իսկ նման «փոխակերպված» կարգավիճակ ձեռք բերած գործին մասնակցող անձանց համար օրենքը երաշխավորում է օրենքով սահմանված կարգով իրենց դատավարական իրավունքները սեփական հայեցողությամբ իրականացնելու, այդ թվում՝ իրենց շահերի պաշտպանության դատավարական միջոցներից օգտվելու՝ ներառյալ հակընդդեմ հայց ներկայացնելու, հնարավորությունը՝ անկախ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործով, որից առանձնացվել է սույն գործով պահանջների մասով վարույթը, ունեցած դատավարական կարգավիճակից:

Վերը նշվածի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանը հիմնավորված է համարում վճռաբեկ բողոքի փաստարկն առ այն, որ թիվ ՇԴ/9165/02/23 քաղաքացիական գործից հակընդդեմ հայցով պահանջների մասն առանձին վարույթում առանձնացվելուց, առանձնացված մասով քաղաքացիական գործին նոր համար շնորհելուց հետո վերջինիս քննությունը պետք է իրականացվեր ընդհանուր հիմունքներով ներկայացված հայցի համար սահմանված դատավարական կարգով, քանի որ նման պայմաններում Դատարանը, ըստ էության, սկսել է նոր գործի վարույթ, ուստի չկար որևէ օրենսդրական արգելք մինչև այդ գործով ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը հակընդդեմ հայց ներկայացնելու համար:

Շարադրվածի համատեքստում, համապատասխանաբար, անհիմն է նաև Վերաքննիչ դատարանի այն եզրահանգումը, որ Կազմակերպության կողմից ներկայացված հակընդդեմ հայցը ենթակա էր վերադարձման ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հիման վրա՝ առանց թերությունները վերացնելու և այն կրկին դատարան ներկայացնելու համար ժամկետ տրամադրելու, որպիսի պայմաններում հակընդդեմ հայցի մասով նույնպես առկա է եղել քաղաքացիական գործի վարույթը կարճելու՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանն իրավասու չէր անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից և հիմնավորումներից Կազմակերպության հակընդդեմ հայցի մասով կարճել գործի վարույթը՝ կիրառելով ՀՀ

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետով սահմանված դատական ակտի անվերապահ բեկանման հիմքը:

Վերոգրյալի հաշվառմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատավարական իրավունքի նորմերի խախտում, որը հանգեցրել է գործի սխալ լուծման:

Այսպիսով, վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Վճռաբեկ դատարանը դիտում է բավարար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 390-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով Վերաքննիչ դատարանի 07.10.2025 թվականի որոշումը բեկանելու համար:

Միաժամանակ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով անհրաժեշտ է կիրառել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված՝ ստորադաս դատարանի դատական ակտը մասնակիորեն բեկանելու և բեկանված մասով գործը նոր քննության ուղարկելու՝ Վճռաբեկ դատարանի լիազորությունը՝ հաշվի առնելով, որ Վերաքննիչ դատարանի 07.10.2025 թվականի որոշումը՝ սկզբնական հայցով գործի վարույթը կարճելու մասով չի բողոքարկվել, և նկատի ունենալով, որ Վերաքննիչ դատարանը, անկախ վերաքննիչ բողոքի հիմքերից ու հիմնավորումներից, բեկանելով Դատարանի 28.11.2024 թվականի վճիռը՝ հակընդդեմ հայցը բավարարելու մասով և այդ մասով ևս կարճելով գործի վարույթը, չի անդրադարձել այդ մասով վերաքննիչ բողոքի հիմքերին և հիմնավորումներին:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարան բողոք բերելու և բողոքի քննության հետ կապված դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են նույն գլխի [ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 10-րդ գլուխ] կանոններին համապատասխան:

Նկատի ունենալով, որ սկզբնական հայցի մասով քաղաքացիական գործի վարույթը կարճվել է, իսկ Ընկերությունը նախապես վճարել է հայցադիմում և վերաքննիչ բողոք ներկայացնելու համար օրենքով նախատեսված գումարն ու չի բողոքարկել Վերաքննիչ դատարանի 07.10.2025 թվականի որոշումը, ուստի դատական ծախսերի հարցն այդ մասով պետք է համարել լուծված:

Հաշվի առնելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է բավարարման, իսկ գործը մասնակիորեն՝ հակընդդեմ հայցի մասով, ուղարկվում է նոր քննության, որպիսի պարագայում դատական ծախսերի բաշխման հարցին այդ մասով հնարավոր չէ անդրադառնալ գործի քննության ներկա փուլում՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ

դատական ծախսերի բաշխման հարցը ենթակա է լուծման գործի նոր քննության արդյունքում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 405-րդ, 406-րդ ու 408-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը բավարարել: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 07.10.2025 թվականի որոշումը մասնակիորեն՝ «Տոսպ Գրուպ» ՍՊԸ-ի հակընդդեմ հայցի մասով գործի վարույթը կարճելու մասով, բեկանել և այդ մասով գործն ուղարկել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի բաշխման հարցը սկզբնական հայցի մասով համարել լուծված, իսկ հակընդդեմ հայցի մասով դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող _____ ***Գ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Զեկուցող _____ ***Ս. ՄԵՂՐՅԱՆ***

_____ ***Ա. ԱԹԱԲԵԿՅԱՆ***

_____ ***Ն. ՀՈՎՍԵՓՅԱՆ***

_____ ***Ա. ՄԿՐՏՉՅԱՆ***

_____ ***Է. ՍԵԴՐԱԿՅԱՆ***